# Պատանի, ընտրիր քո մասնագիտությունը

ԵՐԵՎԱՆ

© National Library of Armenia OCR by Portmind

15 JUN 2013

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ

ԱԼ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱ-ՄԵԹՈԴԱԿԱՆ ԲԱԺԻՆ

օգնություն գրադարանավարին

# ՊԱՏԱՆԻ, ԸՆՏՐԻՐ ՔՈ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

/Մեթոդական նյութեր մասնագիտական կողմնորոշման հարցերի վերաբերյալ/

Ե Ր Ե Վ Ա Ն 1976

© National Library of Armenia

ԿԱԶՄԵՑ՝ Վ. ԴԱՐՅԱՆ
ԽՄԲԱԳԻՐ՝ Ֆ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Сост.: В. ДАРЬЯН
Ред.: Ф. ВАРТАНЯН

МИНИСТЕРСТВО КУЛЬТУРЫ АРМЯНСКОЙ ССР

Государственная республиканская библиотека
им.А.Ф.Мясникяна.
Научно-методический отдел библиотековедения

ВЫБЕРИ СВОЮ ПРОФЕССИЮ-ЮНОША!

/Методические материалы по вопросам профессиональной ориентации/

© Հայկական ՍՍՀ Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարան

Е Р Е В А Н - 1 9 7 6

II - 107379 Ա

Պատանիների և աղջիկների մասնագիտական կողմնորոշման հարցերը ունեն պետական նշանակություն, որոնք իրենց պարզաբանումն են գտել ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1971-1975թ.թ. հնգամյա պլանի ՍՄԿԿ 24-րդ համագումարի դիրեկտիվներում, ուր նշված է.,,Ուժեղացնել աշխատանքը սովորողների պրոֆեսիոնալ կողմնորոշման ուղղությամբ, հաշվի առնելով երիտասարդների հակումները և ժողովրդական տնտեսության պահանջմունքները որակյալ կադրերի նկատմամբ,,[1]:

Մասնագիտական կողմնորոշման հարցը յուրաքանչյուր անհատի կյանքի կարևորագույն խնդիրներից մեկն է հանդիսանում: Պատանիների ու աղջիկների աշխատանքային գործունեությունը խելացի կազմակերպելու համար, անհրաժեշտ է օգնել նրանց ճիշտ ընտրելու նախասիրած մասնագիտությունը:

Մարքսիզմ-Լենինիզմի հիմնադիրները դեռ ժամանակին հատուկ ուշադրություն են դարձրել երիտասարդությանը արդիական աշխատանքի նախապատրաստելու խնդիրներին:

Մասնագիտական գիտելիքների ձեռք բերման հիմնական աղբյուր է հանդիսանում պոլիտեխնիկական կրթությունը, /որը երիտասարդներին ծանոթացնում է արտադրության ձևերի ընդհանուր հիմունքներին/, էքսկուրսիաները արտադրական օբյեկտներում, արտադրական խմբակները, զեկուցումները: Միաժամանակ անհրաժեշտ է երիտասարդության շրջանում ուժեղացնել այնպիսի մասնագիտությունների պրոպա-

---

1/ ՍՄԿԿ 24-րդ համագումարի դիրեկտիվները: Եր., 1971, էջ 63:

© National Library of Armenia

զանդան, որոնք հույժ կարևոր նշանակություն ունեն տվյալ շրջանի ժողովրդական տնտեսության զարգացման համար։

### ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

"Главным руководителем,
который должен нас направлять при выборе профессии,
является благо человечества,
наше собственное совершенствование".+/

Մասնագիտության ճիշտ կողմնորոշման հարցում կարևոր նշանակություն ունի գիրքը՝ գիտելիքների անսպառ աղբյուրը։ Այդ իսկ պատճառով էլ մեծանում է գրադարանների դերն ու նշանակությունը։ Այս ասպարեզում գրադարաններն ունեն լայն հնարավորություններ։ Նրանց տրամադրության տակ են գտնվում մասնագիտական գրականության հարուստ ֆոնդեր, որոնց պրոպագանդան բազմաթիվ միջոցառումների կազմակերպման շնորհիվ կօգնեն երիտասարդներին մասնագիտություն ընտրելու դժվարին, պատասխանատու հարցում։

Գյուղական վայրերում մասնագիտական կողմնորոշման հարցերի պարզաբանման համար կարևոր նշանակություն ունի ՍՄԿԿ Կենտրոնա-

+/ К.Маркс. Размышление юноши при выборе профессии. В кн.: "Ваше представление о счастии". М., "Правда", 1968, с.7-II.



կան Կոմիտեի, կառավարության որոշումները։

ՍՄԿԿ Կենտրոնական Կոմիտեի 1974թ. օգոստոսի 10-ի ,,կոլտնտեսությունների և սովխոզների ղեկավար կադրերի ու մասնագետների վերապատրաստման ու որակավորման բարձրացման ուղղությամբ գյուղատնտեսական մարմինների աշխատանքի մասին,, որոշման մեջ ասված է,,որ անհրաժեշտ է հասնել այն բանին, որ մոտ ժամանակներս կոլտնտեսությունների և սովխոզներլի բրիգադները, բաժանմունքներն ու ֆերմաները ղեկավարեն գյուղատնտեսության որակյալ մասնագետներ, հմուտ կազմակերպիչներ[1],։

Այս որոշումը կարևոր խնդիրներ է դնում դպրոցների, գյուղական, քաղաքային և շրջանային գրադարանների առջև։ Գրադարանները պետք է պատշաճ բարձրության վրա պահեն գյուղատնտեսական մասնագիտական գրականության պրոպագանդան պատանի ընթերցողների հետ տարվող աշխատանքում։ Նրանց անհրաժեշտ է հաղորդակից դարձնել գյուղատնտեսության վերաբերյալ կուսակցության ու կառավարության առաջադրած խնդիրներին։

Մասսայական գրադարանների ֆոնդերում դեռևս քիչ է ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի վերաբերյալ մասնագիտական գրականությունը, որը պետք է բացահայտի արդի ժամանակահատվածում գյուղատնտեսական գիտությունների նվաճումները, նրա զարգացման ուղիները, հեռանկարները։ Ուստի ֆոնդերը կոմպլեկտավորելիս գրադարանավարը պետք է հատուկ ուշադրություն դարձնի գրականության ընտրության վրա։ Այստեղ պետք է համալրվեն մեծ մասամբ վեր-

---

1/ ,,Սովետ. Հայաստան,, 1974, 10 օգոստոսի

© National Library of Armenia

չին ժամանակներում լույս տեսած գյուղատնտեսական տարբեր մասնագիտությունների վերաբերյալ գրականություն, որոնք ամփոփում են գիտության և տեխնիկայի վերջին նվաճումները։

Մասնագիտական կողմնորոշման հարցում պատանի ընթերցողներին շատ կօգնեն գյուղական գրադարանում եղած պարբերական հրատարակությունները, որոնք օպերատիվ կերպով արձագանքում են ժամանակակից գյուղի կյանքին, նրանում տեղի ունեցող նորություններին, պատմում գյուղատնտեսության առաջավորների մասին։ Ընթերցողները կարող են հաղորդակից դառնալ ,,Հայաստանի գյուղատնտեսության,, , ,,Գիտություն և տեխնիկա,, , ,,Կրեստյանկա,, ,,Սելսկի մեխանիզատոր,, և այլ ամսագրերին, ինչպես նաև ,,Твоя профессия" սերիայով հրատարակվող գրականությանը, որոնք մատչելի ձևով ծանոթացնում է ընթերցողին տարբեր մասնագիտությունների հետ։

Մասնագիտական կողմնորոշման հարցերը ավելի պարզ ու որոշակի դարձնելու համար գրադարանավարը պատանի ընթերցողների հետ պետք է տանի հետևողական աշխատանք։ Նա իր առօրյա միջոցառումներում պետք է հանդես բերի ստեղծագործական մոտեցում, ուսումնասիրի թե ընթերցողները ինչպիսի հակում ունեն տվյալ մասնագիտության նկատմամբ։ Բազմազան են գրադարանի մասսայական միջոցառումները, որոնց հիմքում դրված է գրքի պրոպագանդան։ Ուստի համառոտակի նըշենք պատանիների մասնագիտության կողմնորոշման հարցում գրադարանավարների անելիքները.



## 1. ԶՐՈՒՅՑՆԵՐ

Նախքան միջոցառում անցկացնելը գրադարանավարը պետք է կազմի աշխատանքի պլան, ուր կընդգրկվեն զրույցի թեմաները։ Թեմաները ընտրելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այնպիսի հրատարակությունների վրա, որոնցում խոսվում է ժողովրդական տնտեսության զարգացման, գիտության և տեխնիկայի, մշակույթի, արվեստի և գրականության նորությունների մասին։

Զրույցները հետաքրքիր և աշխույժ դարձնելու համար, գրադարանավարը թերթերից, ամսագրերից առանձնացնում է առավել ուշադրության արժանի հոդվածները, թղթակցությունները, պատկերազարդ նյութերը, այս կամ այն ուսումնական հաստատության, պրոֆտեխնիկական ուսումնարանների ընդունելությունների հայտարարությունները։ Ընթերցողների հետ տարվող անհատական և խմբային զրույցների ժամանակ գրադարանավարը կարող է ավելի մոտիկից խորհուրդ տալ նրանց, թե ինչպիսի գրականություն կարող են ընտրել իրենց նախասիրած մասնագիտության վերաբերյալ։

Զրույցների համար գրադարանավարը կարող է ընտրել հետևյալ թեմաները՝ ,,Մեր քաղաքի հիմնարկ-ձեռնարկությունները,, , ,,Ու՞ր գնալ սովորելու,, , ,,Արտադրության առաջավորները,, , ,,Տասներորդ հնգամյակը գործողության մեջ,,և այլն։

## 2. ՀԱՆԴԻՊՈՒՄ ՆՇԱՆԱՎՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԵՏ

Պատանիների և աղջիկների կոմունիստական դաստիարակության, նրանց աշխարհայացքի ձևավորման գործում կարևոր նշանակություն ու-

© National Library of Armenia

նեն հանդիպումները գիտության, տեխնիկայի, արդյունաբերության, գյուղատնտեսության առաջավորների հետ: Այդ նպատակով ընթերցողների տարբեր խմբերի համար գրադարանում պետք է կազմակերպվեն հանդիպման երեկոներ:

Երեկոյի նշանաբանն է ,,ի՞նչ դառնալ,,: Այն անց է կացնում գրադարանավարը, որը ընթերցողներին ծանոթացնում է հրավիրված մասնագետների հետ: Ապա ելույթ են ունենում մասնագետ ընկերները, պատմում իրենց աշխատանքային գործունեության, ձեռք բերված հաջողությունների, հաղթահարված դժվարությունների և հետագա պլանների մասին:

Միջոցառումը կդառնա ավելի բովանդակալից, եթե այն ուղեկցվի ցուցահանդեսով, որը պետք է համապատասխանի երեկոյի թեմային:

3. ԳՐՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐ

,,Պատանի՛, ընտրիր քո մասնագիտությունը,,. այս խորագրի տակ գրադարանում կարելի է անցկացնել գրքային ցուցահանդես, որը կարող է բաղկացած լինել մի քանի բաժիններից:

Ցուցահանդեսի Օրինակ -

Ընդհանուր վերնագիր՝ ,,Պատանի՛, ընտրիր քո մասնագիտությունը,,

Քաղվածք՝ ,,Եթե դուք կարողանաք միշտ ընտրել Ձեր մասնագիտությունը, ապա երջանկությունը ինքը ձեզ կգտնի,,

Կ.Դ. Ուշինսկի.1/

---

Մասնագիտական կողմնորոշման մի քանի հարցեր:/Օգնություն ուսուցչին և ծնողներին/: Եր., 1973, էջ 3:



Առաջին բաժին

Վերնագիր՝ ,,ինչ է քեզ հետաքրքրում դպրոցում,,

Այս բաժնում պետք է զետեղել արվեստի, պատմության, ժողովրդական տնտեսության նվաճումների մասին գրականություն:

Գրականություն

Լեո: Անի: Տպավորություններ, հիշատակներ անցածեն ու մնացածեն: Եր., Պետ.համալս. 1963. 304 էջ:

Լուվրի կամարների տակ: /Հայկական արվեստը ուրարտուից մինչև մեր օրերը ցուցահանդեսը Փարիզում: Ֆրանս. նյութ. թարգմ.՝ Ա.Ա. Քեսոյան/: Եր., Հայաստան, 1974. 178 էջ, դիմանկ. նկ.:

Մելիքյան Ա.Գ. Քիմիայի նվաճումները աշակերտներին: Ե., ,,Լույս,, 1972, 82 էջ:

Աքվերի հետ մենամարտում: Վավերագր. ակնարկ Լենինգրադի ռազմաճ. չեկիստն. մասին: 1941-1945: Եր., ,,Հայաստան,, 1972. 341 էջ, նկ.,

Վաուպշասով Մ.Ա. Տագնապի խաչմերուկներում: /Հուշեր հեղինակի 40 տարի չեկիստի կյանքից: Առաջաբ.՝ Գեն-Լեյտ Պոնոմարենկո/: Ե., ,,Հայաստան,, 1973 599 էջ, 1 թ. դիմանկ.:

Береговой Г.Т. Угол атаки. /Воспоминания,лит.запись Г.Сомова/. М.,"Молодая гвардия". 1971.255 с.

Гудемов А. Продолжение следует. М.,"Молодая Гвардия", 1971. 255 с.

Казакевич Э.Г. Синяя тетрадь./Повесть о В.И.Ленине/.

© National Library of Armenia

М.,"Худож.лит",1969. I67 с.

Климов Е. Школа.... а дальше. Старшекласснику о выборе профессии. Л.,Лениздат,1971. I34 с.

Ульянова-Елизарова А.И. Детские и школьные годы Ильича. М.,Детлит,1973. 32 с.

Երկրորդ բաժին

Վերնագիր՝ ,,Քո աշխատանքը Հայրենիքին,,:

Այստեղ անհրաժեշտ է ներկայացնել գրականություն այնպիսի մասնագիտությունների վերաբերյալ, որոնց նկատմամբ պահանջ ունի տվյալ շրջանի ժողովրդական տնտեսությունը: Ինֆորմացիա տալ, թե ինչ միջոցներով կարելի է ձեռք բերել տարբեր մասնագիտություններ, նրանց որակավորման բարձրացման, պրոֆտեխնիկական կրթության սիստեմի մասին:

Այս բաժնում բացի գրքերից անհրաժեշտ է զետեղել նաև հայտարարություններ բարձրագույն և միջնակարգ հաստատություններում ընդունվելու մասին, որոնք կարելի է վերցնել թերթերից:

Երրորդ բաժին

ՎԵՐՆԱԳԻՐ՝ ,,Ինչպե՞ս ճիշտ ընտրել մասնագիտությունը,,:

Այս վերնագրի տակ անհրաժեշտ է պրոպագանդել այնպիսի գրականություն, որը նվիրված է մասնագիտական կողմնորոշման հարցերին:

Դավթյան Հ.Ե. Զրույցներ ղպրոցական դաստիարակության մասին: Եր., ,,Լույս,, 1974. 121 էջ:



Նալչաջյան Ա.Ա. Պրոֆեսիոնալ կողմնորոշում: Ե., ,,Լույս,, 1973: 128 էջ: Մատենագիտ.՝ էջ 124-125. հայ և ռուս լեզ.:

Հովսեփյան Ա.Ա. ,,Մասնագիտություն ընտրելու արվեստը,,: /Մասնագիտ. մի քանի հարցեր/: Եր., 1973, 56 էջ: /ՀՍՍՀ բարձր. և միջն. մասն. կրթ. մինիստր.: Գիտա-մեթոդ. կաբինետ/:

Մասնագիտական կողմնորոշման մի քանի հարցեր: /Օգնութ. ուսուցչին ու ծնողին/: Ե., 1973: 95 էջ: /ՀՍՍՀ մանկավարժ. ընկ. երև. քաղ. ժողկրթբաժին. մասն. կողմնորոշ. մեթոդ. կաբ./:

Վարդանյան Ա.Ե. Երիտասարդության պրոֆեսիոնալ ձևավորման սոցիալ-տնտեսական պրոբլեմները: Կոնկրետ սոցիոլոգիական հետազոտութ.: Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ. 1974, 297 էջ:

Маркс К. Размышление юноши при выборе профессии. В кн.: Ваше представление о счастье". М.,"Просвещение",1968. с. 7-II.

Ленин В.И. Тезисы о производственной пропаганде. Полное собрание сочинений. Изд.5-е. Т.3I, с. 376-378.

Крупская Н.К. О профессиональной ориентации школьников. /Сборник статей. Вступит. статья И.В.Чувашева/. М.,"Просвещение",1965. 46 с.

Ботяков Л.В. Беседы для родителей учащихся 8-х классов. "О подготовке к выбору профессии." М.,1966. I2 с.

Гомельская А. Фуражка космонавта. - "Служба быта",1968, № 2, с. 26-27.

© National Library of Armenia

Для тех, кто вступает в жизнь. /Вопросы трудоустройства выпускников школ./. - "Партийная жизнь",1966, № I4, с. 53 - 57.

Кикнадзе Н. Двое с одной судьбой. - "Служба быта", 1970, № 6, с. 26 - 27.

Семенов В. Сфера добрых услуг. - "Юность", 1967, № I, с. 82 - 85.

Творчество студентов. - "Служба быта", 1970, № 5, с. 36.

Яшкова М. Добро пожаловать, в вуз! - "Служба быта", 1970, № II, с. 37.

Չորրորդ բաժին

ՎԵՐՆԱԳԻՐ՝ ,,Գիտական Ֆանտազիայի աշխարհում,,:

Այս բաժնում կարելի է ցուցադրել գիտա-հանրամատչելի գրականություն, ,,Էվրիկա,, և ,,Նշանավոր մարդկանց կյանքը,, սերիայով թրատարակվող գրքեր:

Հինգերորդ բաժին

ՎԵՐՆԱԳԻՐ՝ ,,Դու արդեն ընտրել ե՞ս քո մասնագիտությունը,,:

Այս բաժինը նվիրված է նրանց, ովքեր արդեն ընտրել են իրենց մասնագիտությունը:

Այստեղ կարող են տեղ գտնել այնպիսի գրքեր, որոնք լայն մասշտաբով տեղեկություններ են հաղորդում ժամանակակից գիտության



և տեխնիկայի նվաճումների, նրանց ներդրման հնարավորություններ, ինչպես նաև նշանավոր գիտնականների, արտադրության նորարարների կյանքի ու աշխատանքային գործունեության մասին:

Գրականություն

ԳՆՑՎԻՇ ՅՈՒ.Գ. Պոլլանժըվեն գիտնական, խաղաղության և դեմոկրատիայի մարտիկ: Թարգմ.՝ Վ. Ձիդենջան: Եր., Հայպետհրատ,1956: 154 էջ:

ԽՎՍՆԵՎ Ի.Ի. և ուրիշն: Քիմիան գյուղատնտեսության մեջ: Ագրոքիմիայի հիմունքները: Ֆակուլտատիվ դասընթացի ուս. ձեռն. 10-րդ դասար. աշակերտն. համար: Եր., ,,Լույս,, 1974: 167 էջ:

ԼՈՒՆԿԵՎԻՉ Վ.Վ. Հետաքրքրաշարժ կենսաքանություն: Եր., ,,Հայաստան,, 1968: 320 էջ, 1թ. դիմանկ., նկ.:

Мартинов П. Полвека в мире книг. /Предисл.П.Н.Беркова/. Л., "Наука",1969. I83 с.

Мушкина Е. Восемь моих профессий. М.,"Мол.гвардия", I97I. 222 с. /Кем быть?/

Разинский Э. I04 страницы про любовь. Пьеса в 2-х частях. М.,I965. III с.

Скоп Ю. "ТУ-I04" и др. Повести и очерки . /Илл. А.И.Паукова/. М.,"Сов.писатель",I97I. 288 с.

Барзам Ф. Люди и красота. Сокр. пер. с нем. И.Е.Зильбермана. М.,"Легкая индустрия",I967. I28 с.

© National Library of Armenia

## 4. ԹԵՄԱՏԻԿ ԹՂԹԱՊԱՆԱԿՆԵՐ

Բացի գրքային ցուցահանդեսներից գրադարանում կարելի է ստեղծել նաև թեմատիկ թղթապանակներ, որոնց համար նյութերը պետք է վերցնել թերթերից և ամսագրերից: Թղթապանակները կարող են լինել հետևյալ բովանդակությամբ՝ ,,Ուր գնալ սովորելու,, , ,,Մեր շրջանի առաջավորները,, և այլն:

## 5. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՐՏԱՐԱՆՆԵՐ

Մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ պատանի ընթերցողների հետ տարվող աշխատանքներում գրադարանավարը պետք է պրոպագանդի այնպիսի մասնագիտություններ, որոնց պահանջը զգացվում է տվյալ բնակավայրում: Այդ իսկ պատճառով գրադարանում անհրաժեշտ է ստեղծել հիմնարկ-ձեռնարկությունների, զանազան կազմակերպությունների և գյուղատնտեսական մասնագիտությունների քարտարան:

## 6. ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԽՄԲԵՐԻ ՔԱՐՏԱՐԱՆ

Ընթերցողական Փորմուլյարների վերլուծման և աբոնեմենտում պատանի ընթերցողի հետ տարվող կոլեկտիվ և անհատական զրույցներից ելնելով, գրադարանավարը որոշում է, թե որ խմբին է պատկանում տվյալ ընթերցողը: Այստեղ պետք է հաշվի առնել ընթերցողների գիտելիքների մակարդակը:



## 7. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գրականության տեսությունները սովորաբար անցկացվում են գիտության տարբեր ճյուղերի վերաբերյալ՝ տեխնիկայի, գյուղատընտեսության, բժշկության, տիեզերագնացության և այլն: Տեսությունները լինում են թեմատիկ և ոչ թեմատիկ: Մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ ավելի հարմար է անցկացնել գրքերի թեմատիկ տեսությունններ, որոնց նպատակն է ընթերցողների մոտ առաջացնել հետաքրքրություն կոնկրետ մասնագիտության նկատմամբ:

Թեմատիկ տեսություններ անցկացնելու համար, նախ անհրաժեշտ է ընտրել թեման, այնուհետև հավաքել թեմապատասխան գրականություն: Գրադարանի Փոնդերից գրքեր ընտրելիս պետք է հաշվի առնել, թե՞ որ խմբերի համար է նախատեսվում անցկացնել տվյալ միջոցառումը: Գրադարանավարը պետք է ընտրի 3-5 գիրք: Օրինակ՝

ԳԱԳԱՐԻՆ ՅՈՒ.Ա. Ճանապարհ դեպի տիեզերք: Սով. Միութ. օդաչու-տիեզերագնացի պատմածը: Գրակ. գրառում. ,,Պրավդայի հատուկ թղթակից՝ Ն. Դենիմովի և Ս. Բուրգենկովի: Թարգմ. Ս. Մարկոսյան: Ե., Հայպետհրատ, 1962, 215 էջ:

ՏԻԵԶԵՐԱԳՆԱՑՆԵՐԸ Նաիրյան երկրում: /Օդաչու տիեզերագնաց Վ.Վ. Նիկոլաևա Տերեշկովայի և Ա. Նիկոլաևի այցը Սովետական Հայաստան/: Եր., ,,Հայաստան,, 1966: 89 էջ:

ՏԻՏՈՎ Գ. 7000 000 կիլոմետր տիեզերքում: Սովետական Միության օդաչու-տիեզերագնացի պատմածը: Եր., Հայպետհրատ, 1962:174 էջ:

© National Library of Armenia

**ՌՈՄԱՆՈՎ Ա.Պ.** Տիեզերանավերի կոնստրուկտորը: Վավերագր. ակնարկ Ս.Պ. Կորոլյովի մասին: Թարգմ.՝ Ս.Կ. Շարաբյան: Եր., ,,Հայաստան,, 1972 198 էջ:

**ՌԵԲՐՈՎ Մ.Ֆ.** և **ՄԵԼՆԻԿՈՎ Ն.Ա.** Թռիչքը դեպի լուսին մոտ է: /Օդաչու տիեզերագնացներ Սովետական Միության հերոս Վ.Մ. Կոմարովի, Կ.Պ. Ֆեոկտիստովի և Բ.Բ. Եգորովի մասին/: Եր., ,,Հայաստան,, 1965: 88 էջ նկ.

## ԴԻԱՖԻԼՄԵՐԻ, ԴԻԱՊՈԶԻՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ ՖԻԼՄԵՐԻ ՑՈՒՑԱԿ, ՈՐՈՆՔ ԿԱՐԵԼԻ Է ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

### ա/ ԴԻԱՖԻԼՄԵՐ

I. Жертвы суеверий.
2. Искуество древнего Рима.
3. Как научить плавать маленьких детей.
4. Листая церковный календарь.
5. Мозаика , фреска, витраж /О монументальной живописи/.
6. От штыка к ракете../ 50 лет Советских Вооруженных сил/.
7. Происхождение христианства.
8. Рихард Зорге.
9. Советская Армия.
IO. Человек преобразует природу.



### բ/ ԴԻԱՊՈԶԻՏԻՎՆԵՐ

I. Декрет о Земле.
2. Кристалическая решетка.
3. Мировой океан.
4. Миф о народном капитализме.
5. Наша родная Армия.
6. Нефть и ее переработка.
7. Приминение важнейших химических продуктов в народном хозяйстве.
8. Советские гимнасты.
9. Я - "Чайка".

### գ/ ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ ԿԻՆՈՖԻԼՄԵՐ

I. Винный комбинат Массандра.
2. Мастера художественной гимнастики.
3. Третьяковская галерея.
4. Сергей Есенин.
5. Спортивная гимнастика.

© National Library of Armenia

## Р Е З Ю М Е.

Данное методическое письмо является руководством для библиотечных работников города, района и села в помощь трудовому воспитанию и профориентации, развитию активного интереса к профессии, что побуждает заняться тем делом, которое по душе молодым читателям, и уже в самом начале своей трудовой деятельности они должны определить свои способности.

Библиотекарь должен показать молодому читателю характер и содержание профессии, где он может получить выбранную им профессию, какие отрасли народного хозяйства будут развиваться в первую очередь, какие профессии являются наиболее перспективными.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

էջ

Ներածություն

Երիտասարդության մասնագիտական կողմնորոշման հարցում գրադարանների անելիքները և խընդիրները: .................................... 4

1. Զրույցներ.............................. 7
2. Հանդիպում նշանավոր մարդկանց հետ:......... 7
3. Գրքային ցուցահանդեսներ: .................. 8
4. Թեմատիկ թղթապանակներ: .................... I4
5. Մասնագիտությունների քարտարան............. I4
6. Ընթերցողների խմբերի քարտարան: ........... I4
7. Գրականության տեսություն: ................. I5

Դիաֆիլմեր, դիապոզիտիվներ և վավերագրական կինոֆիլմերի ցուցակ, որոնք կարելի է օգտագործել մասնագիտական կողմնորոշման նպատակով:..... I6

Р Е З Ю М Е ............................. I8

© National Library of Armenia

ՎՖ 00198 Պատվեր 45 Տպաքանակ 700

Ստորագրված է տպագրության 24/5 1976թ.

Հանձնված է արտադրության 28/5 1976թ.

Թուղթ 60 84 1/16, տպագրական 1,25 մամուլ, հեղինակային

1 մամուլ: Գինը 6 կոպ.:

Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանի ռոտապրինտ

ՀՀ Ազգային գրադարան
NL0753018

© National Library of Armenia

11
10737

© National Library of Armenia